| 18  | Կայիֆոռնիայի պետական համալսարան, Դոմինգոս Հիյս                                                                                                  |
| 19  | Նիժնի Նովոգորոդի պետական ճարտարագիտա-տնտեսագիտական ինստիտուտ                                                                                    |
| 20  | Սերբիայի Ս.Տ.Շեքենյուկի անվան պետական համալսարան                                                                                                |
| 21  | Աբխազիայի պետական համալսարան                                                                                                                    |
| 22  | Հարավային Օսեթիայի Ն.Ա. Տիբլովի անվան պետական համալսարան                                                                                        |
| 23  | Երևանի պետական համալսարան                                                                                                                       |
| 24  | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան                                                                                                      |
| 25  | Երևանի Մ.Հերագու անվան պետական բժշկական համալսարան                                                                                              |
| 26  | Խ.Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան                                                                                      |
| 27  | Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվախաղաղակագիտական համալսարան                                                                                |
| 28  | Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա                                                                                                              |
| 29  | Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ                                                                                                |
| 30  | Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան                                                                                                  |
| 31  | Գավառի պետական համալսարան                                                                                                                       |
| 32  | Գյումրու Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ                                                                                      |
| 33  | Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան                                                                                                     |
| 34  | Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան                                                                                   |
| 35  | ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ                                                                                                    |
| 36  | «Ղարաբաղ Տեղեկում» ՓԲԸ                                                                                                                          |
| 37  | Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարան                                                                                              |
| 38  | Համատեղ գործունեության պայմանագիր կողմերը ԱրՊՀ. Գիտական,կրթական և մշակութային զարգացման կազմակերպություն ՄՊԸ/SSECD/, Հայ կրթական հիմնարկություն |
| 39  | «Ղ-տեղեկում»ՓԲԸ                                                                                                                                 |
| 40  | «Մինոսիս Արմենիա» ՓԲԸ                                                                                                                           |
| 41  | Բարձրագույն մասնագիտական կրթության դաշնային պետական բյուջետային ուսումնական հաստատություն, Սարատովի Ն.Գ. Չեռնիշևսկու անվան պետական համալսարան   |
| 42  | Սկայիցայի (Սյովակիայի Հանրապետություն) Կենտրոնական եվրոպական բարձրագույն դպրոց                                                                  |
| 43  | Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատություն, Տոմսկի ազգային հետազոտական առնչությունների համալսարան                     |
| 44  | Բարձրագույն մասնագիտական կրթության դաշնային պետական բյուջետային ուսումնական հաստատություն, Սանկտ Պետերբուրգի պետական ճարտարագիտա-տնտեսագիտական  |
| 45  | ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ                                                                                       |
| 46  | Ինքնուրույն պետությունների համալսարանների ասոցիացիա                                                                                             |
| 47  | ՌԴ կառավարությանը կից ժողովրդական տնտեսության ակադեմիա                                                                                          |

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
2021թ. դրամական մուտքեր և ելքեր

| I                 | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ                                        | Ընդամենը           | Տեսակարար կշիռը |
|-------------------|--------------------------------------------------------------------------------------------|--------------------|-----------------|
| ՀՀ                |                                                                                            | Գումարը (հազ.դրամ) |                 |
| <b>Ընդամենը</b>   |                                                                                            | <b>930756.12</b>   | <b>100.0</b>    |
|                   | <i>այդ թվում՝</i>                                                                          |                    |                 |
| 1                 | Գործառնական գործունեությունից եկամուտներ                                                   | 873176.573         | 93.8            |
| <i>այդ թվում՝</i> |                                                                                            |                    |                 |
| 1.1               | Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից                                             | 365012.473         | 39.2            |
| 1.2               | Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումներից (ներառյալ փոխհատուցում և կրթաթոշակ) | 508164.1           | 54.6            |
| 2                 | Գործառնական այլ եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ                                                   | 17093.817          | 1.8             |
| 3                 | Ոչ գործառնական եկամուտներից                                                                | 40485.733          | 4.3             |


| II              | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ                                      | Ընդամենը           | Տեսակարար կշիռը |
|-----------------|------------------------------------------------------------------------------------|--------------------|-----------------|
| ՀՀ              |                                                                                    | Գումարը (հազ.դրամ) |                 |
| <b>Ընդամենը</b> |                                                                                    | <b>918405.5</b>    | <b>100</b>      |
| 1               | Աշխատավարձի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր | 721875.4           | 78.6            |
| 2               | Կրթաթոշակի ծախսեր                                                                  | 48932.6            | 5.3             |
| 3               | Փոխհատուցման ծախսեր                                                                | 18271.0            | 2.0             |
| 4               | Ապրանքանյութական պաշարների ծախսեր                                                  | 8281.0             | 0.9             |
| 5               | Տրանսպորտային և տրանսպորտային ապահովագրության ծախս                                 | 3974.1             | 0.4             |
| 6               | Սարքավորումների և կահույքի ձեռք բերման ծախսեր                                      | 6999.0             | 0.8             |
| 7               | Ոչ նյութական ՀՄ ձեռքբերման ծախսեր                                                  | 3643.0             | 0.4             |
| 8               | Գործուղման ծախսեր                                                                  | 1113.0             | 0.1             |
| 9               | Փոստային և կապի ծախսեր                                                             | 1567.0             | 0.2             |
| 10              | Կոմունալ վճարների ծախսեր                                                           | 1797.9             | 0.2             |
| 11              | Էներգետիկ ծախսեր                                                                   | 22202.8            | 2.4             |
| 12              | Ընթացիկ նորոգման ծախսեր                                                            | 8202.3             | 0.9             |
| 13              | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր                   | 497.0              | 0.1             |
| 14              | Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսեր                                          | 5997.9             | 0.7             |
| 15              | Ներկայացուցչական ծախսեր                                                            | 2650.3             | 0.3             |
| 16              | Այլ հարկեր, պարտադիր վճարներ                                                       | 3794.3             | 0.4             |
| 17              | Այլ ծախսեր/ներառյալ այլ ծրագրերից                                                  | 58606.9            | 6.4             |

ԱՐԴՅ 2021Թ. ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ


(հազար դրամ)

| Անվանումը                                                                    | Նախահաշիվը       | Փաստացի<br>ծախս | Փաստացի<br>ծախսը<br>նախահաշվի<br>նկատմամբ % | Փաստացի<br>ծախսը<br>ընդամենի<br>նկատմամբ % |
|------------------------------------------------------------------------------|------------------|-----------------|---------------------------------------------|--------------------------------------------|
|                                                                              | Ընդամենը         |                 |                                             |                                            |
| Աշխատավարձ                                                                   | 825906.0         | 721875.4        | 87.4                                        | 80.6                                       |
| Կրթաթոշակ                                                                    | 59038.0          | 48932.6         | 82.9                                        | 5.5                                        |
| Փոխհատուցում                                                                 | 21065.0          | 18271.0         | 86.7                                        | 2.0                                        |
| Նյութերի ձեռքբերում                                                          | 9400.0           | 8281.0          | 88.1                                        | 0.9                                        |
| Տրանսպորտային ծախս և<br>ապահովագրություն                                     | 4000.0           | 3974.1          | 99.4                                        | 0.4                                        |
| Սարքավորումների և կահույքի ձեռք<br>բերում                                    | 7000.0           | 6999.0          | 100.0                                       | 0.8                                        |
| Ոչ նյութական ՀՄ ձեռքբերման և<br>վարչական այլ ծառայությունների գծով<br>ծախսեր | 4420.0           | 3643.0          | 82.4                                        | 0.4                                        |
| Գործուղումներ                                                                | 1500.0           | 1113.0          | 74.2                                        | 0.1                                        |
| Կապի ծախս                                                                    | 1900.0           | 1567.0          | 82.5                                        | 0.2                                        |
| Կոմունալ ծախսեր                                                              | 2250.0           | 1797.9          | 79.9                                        | 0.2                                        |
| Էներգետիկ ծառայություններ,                                                   | 28000.0          | 22202.8         | 79.3                                        | 2.5                                        |
| Ընթացիկ և կապիտալ նորոգում                                                   | 10000.0          | 8202.3          | 82.0                                        | 0.9                                        |
| Մեքենաների և սարք. ընթացիկ<br>նորոգում և պահպանում                           | 500.0            | 497.0           | 99.4                                        | 0.1                                        |
| Տեղեկատվական ծառ. գծով ծախս                                                  | 6500.0           | 5997.9          | 92.3                                        | 0.7                                        |
| Ներկայացուցչ. ծախսեր                                                         | 3000.0           | 2650.3          | 88.3                                        | 0.3                                        |
| Այլ հարկեր, պարտադիր վճարներ                                                 | 7000.0           | 3794.3          | 54.2                                        | 0.4                                        |
| Այլ ծախսեր                                                                   | 44800.0          | 35817.5         | 79.9                                        | 4.0                                        |
| <b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը Ծ Ա Խ Ս Ե Ր</b>                                           | <b>1036279.0</b> | <b>895616.1</b> | <b>86.4</b>                                 | <b>100.0</b>                               |
| ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏ                                                              | 580000.0         |                 |                                             |                                            |
| ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ                                                               | 454029.0         |                 |                                             |                                            |

### Եկամուտներ







2020 -21 ուս. տարվա ուսման վարձի գծով զեղչեր

| Ֆակուլտետ                                                                                                 | ուսանողների թիվ | Զեղչի գումարը /դրամ/ |
|-----------------------------------------------------------------------------------------------------------|-----------------|----------------------|
| <b>Բակալավրիատ</b>                                                                                        |                 |                      |
| Բանասիրական                                                                                               | 2               | 125000               |
| Բնագիտական                                                                                                | 1               | 62500                |
| Տնտեսագիտության                                                                                           | 1               | 125000               |
| Պատմության և իրավագիտության                                                                               | 1               | 125000               |
| Մանկավարժության և սպորտի                                                                                  | 2               | 150000               |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                                                           | <b>7</b>        | <b>587500</b>        |
| <b>Մագիստրատուրա</b>                                                                                      |                 |                      |
| Բանասիրական                                                                                               |                 |                      |
| Բնագիտական                                                                                                | 1               | 62500                |
| Տնտեսագիտության                                                                                           |                 |                      |
| Պատմության և իրավագիտության                                                                               |                 |                      |
| Մանկավարժության և սպորտի                                                                                  |                 |                      |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                                                           | <b>1</b>        | <b>62500</b>         |
| <b>Ընդամենը ԱրՊՀ-ի զեղչ</b>                                                                               | <b>8</b>        | <b>650000</b>        |
| Ընդամենը ԼՂՀ կառավարության N 66 առ 14,02,2008թև N 745-Ն առ 13,11,2009 թ. որոշումների ԿԳՆ ցուցակի համաձայն | 8               | 1950000              |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐԸ</b>                                                                                         | <b>8</b>        | <b>2600000</b>       |

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Մահակյան Գեորգի Հրանտի, ֆիզմաթ.գ.թ., դոցենտ

### Հիմնական գործառնություններ՝

1. Բակալավրիատի կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերամշակման գործընթացի կազմակերպում
2. ուսումնական գործունեության օրացույցի մշակում և վերահսկում
3. դասախոսների ծանրաբեռնվածությունների հաստատում և կատարման վերահսկում
4. ֆակուլտետների դեկանատներին և ամբիոններին մեթոդական օգնության ցուցաբերում
5. ուսումնական գործընթացի փաստաթղթային գործունեության վերահսկում
6. ընթացիկ և եզրափակիչ ստուգումների անցկացման վերահսկում
7. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում
8. ուսումնական, արտադրական, մանկավարժական, գիտամանկավարժական փորձուսուցումների անցկացման ժամկետների հաստատում
9. փորձուսուցման մեթոդական աջակցություն
10. ուսումնական գործընթացի կազմակերպման օպտիմալացման գործընթացի շարունակում
11. ամբիոնների և ֆակուլտետների աշխատանքային պլանների հաստատում
12. ավարտական աշխատանքների թեմաների ստուգում և համապատասխանեցում դրանց ներկայացվող պահանջներին
13. ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում

2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակում ուսումնական գործընթացը համապատասխանեցվել է համավարակի, սանձազերծված պատերազմի առաջադրած խնդիրներին: Համալսարանն իրականացրել է հիբրիդ ուսուցում: Ստեղծվել է խումբ՝ առցանց պարապմունքներին անհրաժեշտ մեթոդական օգնություն ցուցաբերելու համար: Իրականացվել է նաև առցանց պարապմունքների վերահսկողություն:

Ուսումնական աշխատանքների կանոնավոր ընթացքն ապահովելու նպատակով իրականացվել են ուսումնական գործընթացին վերաբերող անհրաժեշտ կանոնակարգերի և փաստաթղթերի մշակում, որոնք քննարկվել են ամբիոնների և ֆակուլտետների նիստերում, գիտական խորհուրդներում:

Մշակվել և գիտխորհրդի հաստատման են ներկայացվել երկու նոր կրթական ծրագրեր՝ «Մաթեմատիկա և ֆիզիկա», «Կենսաբանություն և քիմիա», ինչպես նաև վերամշակվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» կրթական ծրագիրը:

Մշակվել է դասախոսության անցկացման և արդյունքների գնահատման ձևաթերթը:

Մշակվել են կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման նոր չափանիշներ:

Շարունակվել են աշխատանքները առկա և հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի որակը և արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Պարբերաբար ստուգվել և քննարկվել են ընթացիկ և եզրափակիչ ստուգումների արդյունքները: Հաստատվել են փորձուսուցման անցկացման ծրագրերը և ժամկետները: Հստակեցվել են փորձուսուցման անցկացման բազային դպրոցներն ու հիմնարկությունները:

Կրթության որակի բարելավման նպատակով հետևողական աշխատանքներ շարունակվեցին պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրանց աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ: Իրականացվել է դասախոսների ծանրաբեռնվածության բաշխման գործընթացը և կատարման վերահսկումը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս ուսումնական տարում շարունակվել է ամբիոնների համալրումը երիտասարդ մասնագետներով:

Կազմակերպվել են հանդիպումներ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որտեղ քննարկվել են դասախոսությունների և գործնական պարապմունքների որակի բարձրացման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև կրեդիտային համակարգում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:



Կազմվել և հաստատվել են օպտիմալ ժամանակացույցներ 2020-2021 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության համար: Քննարկվել և ամփոփվել են 2020-2021 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն շարունակվել է կապը ՀՀ առաջատար բուհերի հետ: Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ընդլայնվել է հրավիրվող դասախոսների թիվը որոշ դասընթացների և առցանց ռեժիմով դասախոսությունների անցկացման համար:

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՊՐՈՂԵԿՏՈՐ**  
*Ավանեսյան Վալերի Միքայելի, պ.գ.դ. ԱրՊՀ պրոֆեսոր*

2020-2021 ուսումնական տարում ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում իրականացված աշխատանքներն են.

- համակարգվել են բոլոր ֆակուլտետների գիտահետազոտական աշխատանքները,
- վերահսկվել են գիտական ամսագրերի, գրադարանի և գիտական հրատարակչության բաժինների աշխատանքները,
- խթանվել է ուսումնական գործընթացում գիտական արդյունքների ներգրավումը,
- շարունակվել է համալսարանի գիտական համագործակցության խթանման գործընթացը արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ, իրականացվում է համատեղ նախագծերի նախաձեռնման և կատարման գործընթացը,
- ապահովվել է համալսարանի միջազգային գործունեության կայուն զարգացումը՝ համալսարանի նպատակներին և ռազմավարությանը համապատասխան,
- կազմակերպվել է միջազգային համագործակցության համաձայնագրերի կնքումը և վերահսկվել դրանց կատարման գործընթացը,
- ապահովվել է գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների, ռեկտորի հանձնարարականների կատարումը գիտական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ,
- աշխատանքներ են տարվել «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» պարբերականի որակի բարձրացման ուղղությամբ,
- աշխատանքներ են տարվել միջազգային կազմակերպություններում և ծրագրերում ուսանողների ներգրավման ուղղությամբ,
- իրականացվել է ամառային ճամբարի շրջանակում ուսանողների ներգրավման և մասնակցության գործընթացը,
- ցուցաբերվել է ակտիվ մասնակցություն ամբիոններում անցկացվող ասպիրանտների և հայցորդների ամենամյա ատեստացիաներին, հաշվետվություններին, ատենախոսությունների քննարկումներին:

ԱրՊՀ-ն հանդես է եկել որպես համակազմակերպիչ միջազգային առցանց գիտաժողովի՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին /Շուշի, 2020թ., հուլիսի 15-16/: Պատմության և քաղաքագիտության ամբիոնը դարձել է միջազգային կոնֆերանսի ակտիվ մասնակից՝ նվիրված ՀՀ և ԱՀ անկախության 30-րդ տարեդարձին /2021թ. 19-23 սեպտեմբեր/:

Գիտական գրադարանի ֆոնդը համալրվել է նվիրատվությամբ և համալսարանի կողմից գնված 1581 միավոր գրականությամբ, որից զուտ գրքերը՝ 1576, և բաժանորդագրվել են 7 անուն թերթ, իսկ էլեկտրոնային ծրագրում մուտքագրվել է հաշվետու տարում ձեռք բերված գրականությունը՝ թվով 800: Էլեկտրոնային գրադարանից օգտվել է 1500 ընթերցող:

Գիտական կադրերի պատրաստման գործում կարևոր է գիտական հետազոտողի ինստիտուտի կայացումը: 2020-2021 ուսումնական տարում ասպիրանտուրա են ընդունվել 10 հայցորդ, ձևակերպվել 4 շրջանավարտներ: Ատեստավորվել են 10 ասպիրանտներ և 9 հայցորդներ:

Կազմակերպվել և իրականացվել են հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված պարտադիր և ընտրովի հետևյալ դասընթացները. «Օտար լեզու», «Գիտության փիլիսոփայություն», «Հոգեբանություն», «Մանկավարժություն», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ»:

2020թ. դեկտեմբեր ամսում և 2021թ. հունիս ամսում լույս են ընծայվել բնական գիտությունների գծով 37, հասարակական գիտությունների գծով՝ 41 գիտական հոդվածներ:

### Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողով

Հաշվետու ժամանակահատվածում «Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողովի» կողմից գումարվել է ութ նիստ, որոնցում քննարկվել են հետևյալ հարցերը.

-Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Զինաիդա Վանիի Բալայանի «Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ» վերնագրով ուսումնասիրության տպագրության երաշխավորման հարցը:

-Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.Սոկրատ Աղալարի Խանյանի «Ղևոնդ Ալիշան. բանաստեղծ-բանասերը» վերնագրով ուսումնասիրության տպագրության երաշխավորման հարցը:

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի, մաթեմատիկայի ամբիոնի դասախոս ֆ.մ.գ.թ., դոցենտ Գեորգի Հրանտի Սահակյանի «Ֆունկցիոնալ անալիզի հիմունքներ» ուսումնական ձեռնարկի տպագրման երաշխավորության հարցը:

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի, մաթեմատիկայի ամբիոնի դասախոս ֆ.մ.գ.թ., դոցենտ Գեորգի Հրանտի Սահակյանի «Ֆունկցիոնալ անալիզ» խնդրագրքի տպագրության մասին:

-Ֆ.մ.գ.թ.,դոցենտ Գուրգեն Ասծատուրի Նալբանդյանի «Դիֆերենցիալ երկրաչափության դասընթաց» ուսումնական ձեռնարկի տպագրության մասին:

-Գ.Ա.Պետրոսյանի «Ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության մասին:Գ.Ա.Պետրոսյանի «Ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության մասին:

-Ն.Հ.Ավանեսյանի «Բանկային գործունեության հիմունքներ» /դասախոսությունների ժողովածու/ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին:

- Ն.Վ.Դուրասանյանի «Технология европейского портфолио как средство формирования и контроля коммуникативной компетенции студентов языкового вуза» ուսումնատեսական տեղեկատուի տպագրության երաշխավորման մասին:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

*Յարամիշյան Վիտյա Բենիկի, հ.գ.թ., դոցենտ*

2020-2021 ուսումնական տարում ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքները, հանրային կապերն ու կարիերայի ուղղությամբ աշխատանքները ԱրՊՀ-ում իրականացվել են՝ էլեկտրոնային ստեղծված բարդ իրավիճակից, նորահայտ մարտահրավերներից ու այն խնդիրների բարդությունից, որոնք օբյեկտիվորեն ծառացել էին ոչ միայն համալսարանի, այլև մեր ողջ երկրի առջև:

Ծանրագույն մարտահրավերներից առաջինը, թերևս, նախորդ ուստարում՝ 2020թ. մարտ ամսում մոլեգնած կորոնավիրուսային համավարակն էր, որն ամբողջ աշխարհում իր տևական բացասական ազդեցությունն ունեցավ բոլոր մարդկանց, այդ թվում՝ մեր համալսարանականների կոլեկտիվ տրամադրությունների ու կարծիքների վրա, երբեմն պահանջելով ոչ ստանդարտ մոտեցումներ և լուծումներ: Լուծումներից մեկը եղավ հեռավար ուսուցման կազմակերպումը՝ որպես այլընտրանք առկա ուսուցմանը: Ի պատիվ համալսարանականների՝ այդ միջոցառումն իրականացվեց պարտքի ու պատասխանատվության, արհեստավարժության պատշաճ մակարդակով՝ ապահովելով բուհական կրթության շարունակականությունը և անհրաժեշտ նվազագույն որակական պահանջները:

Երկրորդ մարտահրավերը էլ ավելի ճակատագրական ու գոյաբանական խնդրի առջև կանգնեցրեց արցախահայությանը, ԱրՊՀ-ականներին: Մեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված ավերիչ ու իր ընդգրկմամբ, ծավալներով ու հետևանքներով սոսկալի պատերազմը խաթարեց համալսարանական գործունեության բոլոր ոլորտները: Համալսարանական համայնքն առնչվեց ինչպես նախորդ պատերազմներից ծանոթ, սակայն իրենց չափերով բազմիցս գերակշռող խնդիրների հետ (թշնամու կողմից իրականացված խոշորամասշտաբ մեղիատեղոր, հոգեբանական և տեղեկատվական ահեղ խոսքեր ու հարձակումներ, ասեկոսներ ու կիսաճշմարիտ առասպելներ, ակնհայտ կեղծ լուրեր, էթնիկական հաշվեհարդարի սպառնալիքներ, ճշմարտությունը թաքցնելու փորձեր, սուտ խոստումներ և այլն), այնպես էլ նորահայտ խնդիրների հետ՝ բռնատեղահանված ու հայրենազրկված ուսանողներ, սոցիալ-կենցաղային ու բնակարանային բնույթի չլուծված հարցեր և ամենակարևորն ու դժվար լուծվողը՝ համատարած ընկճվածություն, հուսահատություն, անորոշություն, փլուզված երազանքներ, վաղվա օրը պլանավորելու անկարողություն և այլ բացասական իրավիճակներ: Արական սեռի ուսանողներն ու դասախոսները մեկնել էին ռազմաճակատ, իսկ նրանք, ովքեր ակտիվ մարտական գործողություններին ընդգրկված չէին, ներգրավվեցին կամավորական թիկունքային աշխատանքներում՝ հնարավորինս աջակցելով ազգափրկության վճռորոշ պայքարին: Քսանվեց ուսանողներ նահատակվեցին՝ իրենց կյանքի գնով ապահովելով մեր ապրելու հնարավորությունը: Նման պայմաններում անհնար էր պարապմունքներ կազմակերպել, կրթություն իրականացնել, ուստի ուսումնական պարապմունքները, մի շարք նախապատրաստական աշխատանքներ իրականացնելուց հետո, հնարավոր եղավ հեռավար ձևաչափով վերականգնել միայն նոյեմբերի 15-ին, իսկ առկա պարապմունքները վերսկսել դեկտեմբերի 1-ին: Առաջին խնդիրը, որն անհրաժեշտ էր անհետաձգելիորեն լուծել, ուսանողների և դասախոսների հաճախելիության վերականգնումն էր, հայաստանյան բուհերից նրանց հետ բերումը, ինչպես նաև նրանց մեծամասնությանը համակած բացասական զգացմունքների ու հույզերի կարգավորումը: ԱրՊՀ ղեկավարությունը զգալի ջանքեր գործադրեց՝ աջակցող ու օգնության ձեռք մեկնած կազմակերպությունների օգնությամբ հետպատերազմյան սինդրոմները հաղթահարելու և համալսարանական գործունեությունը բնականոն հունի մեջ վերադարձնելու ուղղությամբ: Այդպիսի միջոցառումներից էին խաղաղապահ ուժերի մասնագետների, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Բժիշկներ առանց սահմանի և այլ հումանիտար կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցությունը, հոգեբանական աշխատաժողովը՝ ՀՀ լավագույն հոգեբանների ներգրավմամբ, խմբային և անհատական հոգեբանական խորհրդատվական ու հոգեշտկող

միջոցառումների անցկացումը, ուսանողական արշավներն ու ամառային միջազգային վրանային ճամբարը:

Հաջորդ կարևորագույն խնդիրը համալսարանի միջազգային հավատարմագրման գործընթացն էր, որը, չնայած համավարակի ու պատերազմի պատճառով երկու անգամ հետաձգվել էր, սակայն, այնուամենայնիվ, նույնպես համալսարանականների կողմից պատվով իրականացվեց: Որակի ապահովման ազգային հանձնաժողովի գնահատմամբ, ԱրՊՀ-ում ուսանողական համակարգի հետ տարվող աշխատանքների ուղղվածությունը, բնույթը և որակը միանգամայն համահունչ է ժամանակակից պահանջներին, իրականացվում է ուսանողամետ և ուսանողակենտրոն սկզբունքներով՝ հենվելով համալսարանի կառավարման գործընթացում ուսանողների ներգրավվածության, կարծիքների ուսումնասիրման և հաշվառման, նրանց ակտիվության և նախաձեռնողականության վրա: «Ուսանողները» և «Հանրային կապեր» չափանիշներով համալսարանում կատարված աշխատանքը հավատարմագրման հանձնաժողովի կողմից արժանացավ բարձր գնահատականի:

Թվարկված խնդիրների որակյալ կատարման գործին նպաստել է այն հանգամանքը, որ համալսարանում հաջողությամբ գործել են ինչպես ուսանողների հետ տարվող աշխատանքների հաստիքային համակարգը, այնպես էլ ուսանողական ինքնավար կառույցները՝ ուսանողական խորհուրդները, գիտական ընկերությունը, նախասիրական ակումբները, ակտիվը:

Առհասարակ, յուրաքանչյուր գործում հաջողության գլխավոր գրավականը ճիշտ պլանավորումն է, ինչի շնորհիվ ամրապնդվում են ձեռքբերումները, ստեղծվում են նոր հնարավորություններ՝ զարգացման համար: Հաշվետու ուսումնական տարում մշակվել է հանրային նշանակության միջոցառումների պլանը, նախատեսված միջոցառումները հիմնված են եղել ԱրՊՀ միջազգային համավատարմագրման և գործունեության 50-ամյակին նվիրված ծրագրերի վրա: Հաշվի են առնվել օբյեկտիվ դժվարությունները՝ պարապմունքների կազմակերպման երկհերթ բնույթը և լսարանային պայմանների ու դահլիճների սակավությունը: Այդ պատճառով առավելությունը տրվել է արտագնա միջոցառումներին՝ դրանք կազմակերպելով համագործակցող կազմակերպություններում: Ստեղծված իրավիճակը մենք դիտարկել ենք ոչ թե որպես խոչընդոտ, այլ որպես հնարավորություն՝ նոր ուղղություններ ընտրելու համար:

Աշխատանքի արդյունքում հանրային կապերն ու հասարակայնության հետ տարվող աշխատանքները կազմակերպվել են այնպես, որ «Արցախի համալսարան» պաշտոնաթերթը, «Քո ժամանակը» ուսանողական թերթը, ԱրՊՀ պաշտոնական կայքէջը, սոցիալական ցանցերում համալսարանական էջերը ակտիվորեն ու օպերատիվորեն ներկայացնեն համալսարանը հասարակության լայն շրջանակներին: ԱրՊՀ ներքին և արտաքին կյանքը նաև լայնորեն լուսաբանվել է հանրապետության ամենատարբեր լրատվամիջոցների, այդ թվում՝ հանրային հետուստատեսության միջոցով:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

### Ավետիսյան Ռուսլան Բորիկի

2020-2021 ֆինանսական տարում շարունակվել է համալսարանի նյութատեխնիկական բազայի հարստացման, մասնաշենքերի ընթացիկ նորոգման, ԱրՊՀ ճամբարի կառուցման, ուսանողների և աշխատակիցների համար ավելի անվտանգ և ապահով միջավայրի ստեղծման աշխատանքները:

Ուսանողների կեցության պայմանները բարելավելու նպատակով 2021թ. նոյեմբերից սկսվել են հանրակացարանի 2-րդ մուտքի 2-րդ հարկի երկու մասնաբաժինների և միջանցքների վերանորոգման աշխատանքները:

2021թ. ընթացիկ վերանորոգումներ են ընթացել բոլոր մասնաշենքերի լսարաններում, աշխատասենյակներում, միջանցքներում, պահակակետերում, կաթսայատներում, տանիքներում և նկուղներում:

2021թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում լրիվությամբ փոխարինվել է հանրակացարանի 2-րդ հարկի ջեռուցման համակարգը, մնացած հարկերում կատարվել է վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքներ են իրականացվել սեփական ջեռուցման ցանցի և կաթսայի նորոգման, կաթսայատան և ներքին էլեկտրական ցանցի անխափան աշխատանքների ապահովման ուղղությամբ:

Բոլոր մասնաշենքերում կատարվել են 44-օրյա պատերազմի հետևանքով վնասված պատուհանների ապակիների և ապակեփաթեթների փոխարինման աշխատանքներ:

2020-2021 ֆինանսական տարում ձեռք է բերվել նաև 7586.0 հազ. դրամի տնտեսական գույք և սարքավորումներ, 298.4 հազ. դրամ արժողությամբ դեղորայք:

ԱրՊՀ ամառային ճամբարի տարածքում ավարտման փուլում են խոհանոց-հովհարի, բաղնիք-գուգարանի կառուցման աշխատանքները: Ավարտին է հասցվել թոնրատան, ներքին էլեկտրական ցանցի շինարարության, տարածքի մաքրման և հարդարման ու խոհանոցի անհրաժեշտ գույքով (2267.0 հազար դրամի գույք և սարքավորումներ) ապահովման աշխատանքները: Նշված և այլ աշխատանքները իրականացնելու համար 2020թ. ԱրՊՀ գնումների պլանով նախատեսված 10 մլն. դրամից ծախսվել է 9.997 մլն դրամ: Հարավային Կովկասի շվեյցարական հիմնադրամի ֆինանսավորմամբ «ԱրՊՀ ճամբարի կառուցում» ծրագրի շրջանակներում սկսվել են աղբյուրի և խաղահրապարակի կառուցման աշխատանքները:

Անձնակազմի սպասարկման բաժնի միջոցով մշտական աշխատանքներ են տարվում համալսարանի մաքրության, սանիտարահիգիենիկ վիճակի, կարգուկանոնի պահպանության, անվտանգության ապահովման և բակի ու պարտեզների բարեկարգման ուղղությամբ:

## ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

## Մարգարյան Գայանե Գեորգիի, կ.գ.թ., դոցենտ

2020-2021 ուսումնական տարում ԱրՊՀ-ում հրավիրվել է գիտական խորհրդի 9 նիստ և քննարկվել օրակարգային 47 հարց, որից 5-ը՝ կանոնակարգային: Համալսարանում կատարվող կանոնակարգային փոփոխությունները, նոր կարգերի մշակումը, ընդունումը և կիրառումը միտված են ուսումնագիտական գործունեության բարելավմանը: Գիտխորհրդի կողմից ընդունված բոլոր որոշումները հասանելի էին ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներին:

Համալսարանի զարգացման ծրագրի շրջանակներում կատարված կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնավարման ժամկետների ավարտամբ պայմանավորված՝ կազմակերպվել են ամբիոնի վարիչների /6/ և դեկանների /2/ ընտրություններ և վերընտրություններ, համակարգվել դրանց ընթացակարգն ու արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում ԱրՊՀ-ում հայտարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների մրցույթ, ըստ որի կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ՝ ավագ դասախոսի և դոցենտի թափուր պաշտոնների համար:

2020-2021 ուսումնական տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը համալսարանի ստորաբաժանումների և ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի հետ: Դոցենտի գիտական կոչումները հաստատելու, ինչպես նաև համապատասխան դիպլոմներով ամրագրելու նպատակով ՀՀ ԲՈԿ է ներկայացվել 3 հայտ: Ներկայացված բոլոր հայտերը բավարարվել են, և հայտատուների գիտական կոչումները հաստատվել ու ամրագրվել են դիպլոմներով:

Արցախի Հանրապետության զարգացման գործում ունեցած ավանդի համար երկրահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, բարեգործ, ԱՀ պետական խորհրդատու Գրիգորի Արկադիի Գաբրիելյանցին շնորհվել է ԱրՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

ԱրՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեության մեջ մեծ ներդրում ունենալու համար Հայկական իրավունքների հանձնախմբի համանախագահ և Ամերիկայի հայ իրավաբանների կառավարիչների խորհրդի անդամ Գառնիկ Սիրականի Քերթոնյանին շնորհվել է ԱրՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Շվեյցարիայի Հարավային Կովկասի հիմնադրամի տնօրեն Ֆիլիպ Էգգերին ԱրՊՀ-ի զարգացման գործում ունեցած ավանդի համար շնորհվել է ԱրՊՀ պատվավոր դոկտորի կոչում: Պատվավոր դոկտորի կոչումն է շնորհվել նաև Արցախի հանրապետության հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Մասիս Մայիլյանին ԱրՊՀ-ի զարգացման գործում ունեցած ավանդի համար:

ԱրՊՀ-ում երկարամյա գիտամանկավարժական գործունեության համար և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պ.գ.դ., պրոֆեսոր, գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Միքայելի Ավանեսյանը պարգևատրվել է «ԱրՊՀ Ոսկե մեդալով»:

ԱրՊՀ-ում երկարամյա գիտամանկավարժական գործունեության համար և ծննդյան 65-ամյակի կապակցությամբ ֆիզմաթ.գ.թ., դոցենտ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Հրանտի Սահակյանը պարգևատրվել է «ԱրՊՀ Ոսկե մեդալով»:

Տպագրության է երաշխավորվել «ԱրՊՀ գիտական տեղեկագրի» /բնական և հասարակական գիտություններ/ և ԱրՊՀ 50-ամյակին նվիրված ԱրՊՀ գիտական ընթերցումների հոդվածների ժողովածուն: Գիտական խորհրդի կողմից երաշխավորվել են շուրջ երկու տասնյակ գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հայցորդների և ասպիրանտների գիտահետազոտական գործունեությունը խթանելուն ուղղված աշխատանքները: Հաստատվել են ԱրՊՀ հայցորդների և ասպիրանտների ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանները:

Ակտիվ և թափանցիկ էր ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող մշտական հանձնաժողովների աշխատանքը:

ԱրՊՀ մի շարք դասախոսներ և ուսանողներ ներգրավված են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտական պետական կոմիտեի և ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ֆինանսավորվող թեմաների կատարման խմբերում:

Կատարված աշխատանքները միտված էին համալսարանի գիտական ներուժի բացահայտմանը և գիտական մտքի ձևավորմանն ու զարգացմանը:



## ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

### *Մրցութային հանձնաժողով*

ԱրՊՀ-ում գործող ընթացակարգերի համապատասխան՝ մրցութային հանձնաժողովը 2020-2021 ուսումնական տարում իրականացրել է հետևյալ աշխատանքը.

ա) վերահսկել է մրցութի վերաբերյալ հայտարարության օրվանից սահմանված ժամկետում փաստաթղթերի ներկայացման ժամկետներն ու ցանկը,

բ/ վերահսկել է մրցութի մասնակցի փաստաթղթերի որակավորման մանդատային հանձնաժողովի կողմից ուսումնասիրման ու համապատասխան եզրակացության տրամադրման գործընթացը,

գ/վերահսկել է համապատասխան ամբիոնի նիստում հավակնորդի փաստաթղթերի քննարկման և քննարկման արդյունքում ընդունված կարծիքի (որոշման) տրամադրման գործընթացը,

դ/վերահսկել է ֆակուլտետի խորհրդում մրցութի մասնակցի փաստաթղթերի ուսումնասիրման և գրավոր կարծիքի համապատասխանությունը սահմանված պահանջներին,

ե/ ընդունել է որոշում ԱրՊՀ գիտական խորհրդի նիստում թեկնածությունը քննարկման ներկայացնելու կամ քննարկումից հանելու մասին, ըստ այդմ՝

ընթացքավորվել և իրականացվել է թափուր պաշտոնների համար ամբիոնի վարիչի՝ 7, դոցենտի, ավագ դասախոսի՝ 26 մրցութ:

Մրցութային հանձնաժողովի կողմից իրականացվելիք աշխատանքներն ուղղակիորեն պայմանավորված են ԱրՊՀ-ում պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համար հայտարարվող մրցութներով:

### *Ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողով*

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպել է գիտխորհրդում հաստատված աշխատանքային պլանի համաձայն: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել, գիտխորհրդի տարբեր հանձնաժողովներում քննարկվել և գիտխորհրդի հաստատման են ներկայացվել՝

1. ԱրՊՀ ՊՈԱԿ Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի կամընտրական դասընթացների կազմակերպման կարգը,

2. ավարտական աշխատանքի վերահսկման օրացուցային ժամանակացույցի նմուշը, 3. դասախոսների անցկացման և արդյունքների գնահատման ձևաթերթի նմուշը,

4. *դասախոսի պորտֆոլիո* որակի ապահովման գործիքը:

Համալսարանի ստորաբաժանումներում կազմակերպված հարցման արդյունքում ստացված առաջարկությունները քննարկվել են հանձնաժողովի նիստերում:

### *Ուսումնամեթոդական աշխատանքների հանձնաժողով*

1. Քննարկվել և եզրակացություններ են տրվել մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների փոփոխությունների վերաբերյալ:

2. Իրականացվել են ուսումնական ստորաբաժանումների ուսումնամեթոդական գործընթացին առնչվող աշխատանքների նկատմամբ վերահսկողություն:

3. Քննարկվել են կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման նոր չափանիշներ:

4. Մշակվել է դասախոսության անցկացման և արդյունքների գնահատման ձևաթերթը:

5. Տրվել են առաջարկություններ ուսումնառության որակի բարելավման վերաբերյալ:

6. Եզրակացություն է տրվել ուսուցման կրեդիտային համակարգին առնչվող ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

7. Քննարկվել են ԱրՊՀ գիտխորհրդի հաստատմանը ներկայացվող ուսումնամեթոդական աշխատանքներին առնչվող ներքին իրավական ակտերի նախագծերը:

8. Եզրակացություն է տրվել գիտխորհրդի երաշխավորությանը ներկայացվող հետևյալ 13 ուսումնամեթոդական աշխատանքների տպագրության հիմնավորվածության մասին.

- ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գուրգեն Ասծատուրի Նալբանդյանի «Դիֆերենցիալ երկրաչափության դասընթաց» ուսումնական ձեռնարկը:

- ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գեորգի Հրանտի Սահակյանի «Ֆունկցիոնալ անալիզի հիմունքներ» ուսումնական ձեռնարկը:

- ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գեորգի Հրանտի Սահակյանի «Ֆունկցիոնալ անալիզ» խնդրագիրքը:

- ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Նելլի Նորիկի Դավթյանի «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» ուսումնամեթոդական ձեռնարկը:

- ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի ամբիոնի ավագ դասախոս, ք.գ.թ. Աննա Վոլոդյայի Ստեփանյանի և դասախոս Կարինե Համլետի Մանգասարյանի «Մենդի քիմիա» ուսումնամեթոդական ձեռնարկը:

- ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գայանե Ալբերտի Պետրոսյանի «Ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը» ուսումնամեթոդական ձեռնարկը:

- ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Հրանտի Ավանեսյանի «Բանկային գործունեության հիմունքներ» /դասախոսությունների ժողովածու/ ուսումնամեթոդական ձեռնարկը:

- ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանոգերմանական լեզուների ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Նարինե Վաչագանի Դուրասանյանի «Технология европейского языкового портфолио как средство формирования и контроля коммуникативной компетенции студентов языкового вуза» տեղեկատու ձեռնարկը:

- Տիգրան Թագմանյանի, Նելլի Դավթյանի, Ջուլիետա Սաֆարյանի «Գեղեցիկ, տգեղ, օգտակարը և վնասակարը մարդու զգայական և բնության համակարգում» ուսումնաօժանդակ ձեռնարկը:

- Հասմիկ Ջուլշուդի Մինասյանի և Արտակ Գուլյանի «Կենսաբանական տերմինների բացատրական բառարան»-ը:

- ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանոգերմանական լեզուների ամբիոնի ավագ դասախոս Ֆլորա Ռոբերտի Այվազովայի «More English Through Practice» ուսումնամեթոդական ձեռնարկը:

- Պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս, պ. գ. թ. Տարոն Վլադիկի Հակոբյանի «ԼՂՀ պետական շինարարության գործընթացը 1991-1995թթ.» ուսումնամեթոդական ձեռնարկը:

#### ***Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողով***

Հաշվետու ժամանակահատվածում գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողովի կողմից գումարվել է ութ նիստ, որոնցում քննարկվել են հետևյալ հարցերը.

- ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Զինաիդա Վանիի Բալայանի «Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ» ուսումնասիրության տպագրության երաշխավորում:

- ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Սոկրատ Աղալարի Խանյանի «Ղևոնդ Ալիշան.բանաստեղծ-բանասերը» ուսումնասիրության տպագրության երաշխավորում:

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գեորգի Հրանտի Սահակյանի «Ֆունկցիոնալ անալիզի հիմունքներ» ուսումնական ձեռնարկի տպագրման երաշխավորում:

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գեորգի Հրանտի Սահակյանի «Ֆունկցիոնալ անալիզ» խնդրագրքի տպագրության երաշխավորում:

- ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գուրգեն Ասծատուրի Նալբանդյանի «Դիֆերենցիալ երկրաչափության դասընթաց» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորում:

- ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Գայանե Ալբերտի Պետրոսյանի «Ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորում:

- ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Հրանտի Ավանեսյանի «Բանկային գործունեության հիմունքներ» /դասախոսությունների ժողովածու/ ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորում:

- ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Նարինե Վաչագանի Դուրասանյանի «Технология европейского портфолио как средство формирования и контроля коммуникативной компетенции студентов языкового вуза» տեղեկատու ձեռնարկի տպագրության երաշխավորում:

### ***Բուհ-գործատու համագործակցությունն ապահովող հանձնաժողով***

ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող ԱրՊՀ-գործատու համագործակցությունն ապահովող հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հանձնաժողովի գործունեության աշխատակարգի և ԱրՊՀ ռազմավարական ծրագրի շրջանակներում:

Հաշվետու ժամանակում հանձնաժողովի կողմից պլանավորվել և իրականացվել է.

1. ԱրՊՀ-գործատու համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի 2020-2021 ուս. տարվա աշխատանքների պլանի մշակում և հաստատում,

2. *Բուհ-գործատու* կապի զարգացման ապահովում ԱրՊՀ Որակի ապահովման կենտրոնի, ՈԻՀՏԱ և կարիերայի բաժնի հետ,

3. ԱրՊՀ բոլոր ֆակուլտետներում գործող ֆակուլտետի խորհրդին կից գործատուների հետ համագործակցության հանձնաժողովների պլանների մշակում, աշխատանքների համակարգում և զարգացում,

4. ամբիոնների կողմից գործատուների ներկայացուցիչների ներգրավում կրթական ծրագրերի մշակման, հաստատման և մշտադիտարկման գործընթացներում,

5. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում գործատուների ներկայացուցիչների ներառում:

ԱրՊՀ-ում կայացել է համագործակցության հուշագրի ստորագրում «Միներջի Միաթեմա» և «Կապիտալ Մոֆթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ, որոնք կնպաստեն առաջին հերթին բուհի շրջանավարտներին աշխատանքով ապահովմանը:

Շրջանավարտ և պոտենցիալ գործատու հետադարձ կապի ապահովման նպատակով ՈԻՀՏԱ և կարիերայի բաժինը ուսանողների շրջանում աշխատաշուկայի, աշխատանքի, գործատուների, թափուր աշխատատեղերի և այլ նմանատիպ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն է տարածում կայքէջի միջոցով:

Այսպիսով, 2020-2021 ուսումնական տարում, չնայած նրան, որ կազմակերպվելիք մի շարք միջոցառումներ չկայացան ԱՀ-ի դեմ սանձազերծած պատերազմի և երկրում տիրող ռազմական իրավիճակի պատճառով, հանձնաժողովը իրականացրել է գործողություններ, որոնք մեծ մասամբ ամրապնդել են համալսարանի կապը գործատուների հետ:

### ***Որակի ապահովման մշտական հանձնաժողով***

1. Իրականացվել են ՈԱ կենտրոնի կողմից մշակված *դասախոսի պորտֆոլիո* որակի ապահովման գործիքի վերաբերյալ քննարկումներ և ներկայացվել առաջարկություններ ՈԱ կենտրոնին: Այն նաև նախատեսված է որպես ռազմավարական ծրագրի նպատակ 1-ի խնդիր 1.4-ի լուծմանն ուղղված միջոցառման մաս:

2. ՈԱ հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են նաև ՈԱ կենտրոնի կողմից ստեղծված *ուսանողի պորտֆոլիո* որակի ապահովման գործիքի համար մեթոդական հիմքերը և ներկայացվել առաջարկություններ:

**Ուսանողների հետ տարվող աշխատանքների մշտական հանձնաժողով**

2020-2021 ուսումնական տարում ուսանողների հետ տարվող աշխատանքների մշտական հանձնաժողովը փորձել է շարունակաբար կյանքի կոչել այն ուղեգիծը, որը որդեգրել էր նախորդ տարիներին՝ ելնելով համալսարանի առջև դրված ռազմավարական նպատակներից ու խնդիրներից: Գլխավոր նպատակներն, անշուշտ, ԱրՊՀ միջազգային ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն իր ավարտին հասցնելն էր և կորոնավիրուսային համավարակի պայմաններում ուսանողների հետ տարվող աշխատանքների շարունակականության ապահովումը: Այդ տրամաբանության մեջ կարևորվել են.

- բարդ իրավիճակներում ուսանողների հանրային ակտիվության պահպանումը,

- դպրոցների շրջանավարտների միջավայրում համալսարանի վարկանիշի պահպանումը,

- համալսարանի հանրային պատասխանատվության ընդլայնումը:

10. Ձևակերպվել և ռեկտորի հաստատման են ներկայացվել համապատասխան հրամաններ /ասպիրանտների և հայցորդների շարժի հետ կապված, ազատման, ակադեմիական արձակուրդից վերականգնման, կրթաթոշակների նշանակման, փոխադրման/:
11. Կազմակերպվել է հայցորդների ուսման տարեկան վարձերի ժամանակին գանձումը /համալսարանի հաշվապահության հետ համատեղ/:
12. Ստուգվել և համալսարանի գիտական խորհրդի հաստատման են ներկայացվել ասպիրանտների և հայցորդների աշխատանքային անհատական պլանները:
13. Ըստ բաժանմունքների և ամբիոնների՝ տրամադրվել են բոլոր հրամանների քաղվածքները:
14. Մայիս-հունիս ամիսներին համապատասխան ամբիոններ են ուղարկվել գրություններ՝ հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված ուսումնական ծանրաբեռնվածությունների մասին:
15. Սահմանված կարգով ընթացքավորվել են բաժնի գործառնությունների շրջանակում ստացած դիմումները, կազմվել և տրամադրվել են անհրաժեշտ տեղեկանքներ, ասպիրանտների և հայցորդների հանձնած որակավորման ստուգարք- քննությունների մասին ամփոփագրեր:
16. Համակարգվել է ասպիրանտուրայի ուսումնական գործընթացին մասնակցող ԱրՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:
17. Կոորդինացվել են ամբիոնների լաբորանտների աշխատանքները ասպիրանտների և հայցորդների մասով, նրանց ցուցաբերվել է մեթոդական օգնություն:
18. Դեկանատների և ամբիոնների վարիչների միջոցով կազմվել է ասպիրանտուրայի ընդունելության հայտ՝ ԱՀ ԿԳՄՍ նախարարություն ուղարկելու համար:
19. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն, ԿԳՄՍ նախարարություն և այլ պետական մարմիններ են ներկայացվել տեղեկատվավիճակագրական և պահանջվող այլ տվյալներ:
20. Աշխատանք է տարվել գիտաժողովների, աշխատաժողովների մասնակիցների կողմից ներկայացվող հոդվածների, նյութերի հավաքագրման գործընթացի ուղղությամբ:

## ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

*Կենտրոնի վարիչ՝ Շուշանիկ Պավլիկի Սադյան, բ.գ.թ., դոցենտ*

2020/21 ուս. տարվա ընթացքում, համաձայն համալսարանում գործող կարգի, Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ ՈԱԿ) իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար կազմակերպել է մի շարք աշխատանքներ:

1. Որպես ԱրՊՀ-ում Google for Education կրթական էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքներին ներգրավված պատասխանատու և կազմակերպիչ օղակ՝ ՈԱԿ-ն իրականացրել է նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներ՝ համագործակցելով ՀՊՄՀ ԿԵԿ բաժնի պետ Ա. Սարգսյանի հետ: Կենտրոնին վերապահված գործառնություններից են՝ ընդհանուր գործընթացի կազմակերպում՝ ներառելով համապատասխան ստորաբաժանումներին, և էլեկտրոնային դասընթացների որակի վերահսկում: Որպես նշվածի իրականացում՝ ՈԱԿ-ը յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի սկզբում դեկանատներին և ամբիոններին է ուղարկում ժամանակացույց և համապատասխան ծանուցումներ: Կատարվել է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար նախատեսված էլեկտրոնային ուղեցույցների տեղայնացում: ՈԱԿ-ն ընթացիկ խնդիրներին լուծումներ տալու նպատակով նաև սերտ համագործակցում է ՏՏՀՄԲ բաժնի պետ Է. Ղահրամանյանի հետ:

2. Քննվող ուսումնականում ԱրՊՀ-ն անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, որի երկրորդ *փորձաքննություն* փուլին անհրաժեշտ փաստաթղթերի ապահովման, էլեկտրոնային հարցաշարի լրացման, կազմակերպչական այլ հարցերի նախապատրաստական աշխատանքներում զգալի է եղել ՈԱԿ-ի դերը:

3. Համապատասխան կարգի համաձայն, համակարգչային ծրագրի միջոցով իրականացվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի (թեմաները չպետք է կրկնվեն առնվազն երեք տարվա կտրվածքով), ինչպես նաև ավարտական աշխատանքների, առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի գրագողության նկատմամբ վերահսկողություն:

Ստուգման ընթացքում վեր են հանվել մեկ արտագրություն, վերնագրային անհամապատասխանություններ, տեխնիկական թերություններ (տե՛ս Դիագրամ): Ամբիոններում շտկվել են նշված թերությունները:

ՈԱԿ-ն արձանագրել է նաև աշխատանքների հավաքագրման տեխնիկական թերություններ: Նշված թերությունների վերացումները պետք է իրականացվեն կանոնակարգային միջամտությամբ:

4. ՈԱԿ-ն անց է կացրել հարցում՝ պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման վերաբերյալ (տե՛ս էջ ): Հարցման արդյունքներն ուղարկվել են ամբիոններ, ինչպես նաև հղվել են դասախոսների էլեկտրոնային հասցեներին: Կենտրոնի կողմից ուսումնական տարվա վերջին ամբիոններին տրվել է առաջարկություն՝ հարցաշարի որակական փոփոխության առումով: ՈԱԿ-ը ստացել է որոշակի առաջարկներ:

5. Ռազմավարական ծրագրի նպատակ 1-ի խնդիր 1.1-ի համապատասխան՝ համալսարանում իրականացվել է մասնագիտական կրթական ծրագրերի վերամշակման, համալրման գործընթաց, որին ՈԱԿ-ը գործուն աջակցություն է ցուցաբերել: Կատարվել են բազմակի հանդիպումներ ամբիոնների վարիչների, կրթական ծրագրերի պատասխանատուների հետ:

6. Ռազմավարական ծրագրի նպատակ 1-ի խնդիր 1.4-ի պահանջներին համապատասխան՝ կատարվել է ՊԴ կազմի ներուժի գնահատում՝ ըստ ՄԿԾ-ների (տե՛ս Աղյուսակ ):

7. Ի կատարումն ԱրՊՀ որակի ապահովման գործիքակազմի վերամշակման և համալրման աշխատանքների՝ ՈԱԿ-ը ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողովի քննարկմանն է ներկայացրել *դասախոսի պորտֆոլիո* որակի ապահովման գործիքը, որը նաև նախատեսված է որպես ռազմավարական ծրագրի նպատակ 1-ի խնդիր 1.4-ի լուծմանն ուղղված միջոցառման մաս: Նշված գործիքը կնպաստի նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներուժի գնահատման աշխատանքներին:

Կենտրոնը ստեղծել է *ուսանողի պորտֆոլիո* որակի ապահովման գործիքի համար մեթոդական հիմքեր և համագործակցում է ոչ միայն ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողովի, այլև ՏՀՄԲ Բաժնի հետ՝ գործիքի էլեկտրոնային տարբերակի ստեղծման համար (դրանով կլուծվի ռազմավարական ծրագրի նպատակ 1-ի խնդիր 1.1-ի 7-րդ կետը):

### **ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ** *Բաժնի պետ՝ Հայրապետյան Անուշ Վաչագանի*

2020-2021 ուսումնական տարում բաժինը կազմակերպել է ուսումնական պլաններով նախատեսված բակալավրի ուսումնական (24), մանկավարժական (20), արտադրական (8) և մագիստրատուրայի գիտամանկավարժական (20) փորձուսուցումներ: Իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմվել է ուսումնական տարվա փորձուսուցման գրաֆիկը,
2. Ամբիոնների հետ հստակեցվել են փորձուսուցման վայրերը,
3. Կնքվել են պայմանագրեր ԱՀ տարբեր գերատեսչությունների, հիմնարկ-ձեռնարկությունների, բանկերի, հանրակրթական հաստատությունների հետ,
4. Փորձուսուցում մեկնող ուսանողների հետ կազմակերպվել են կողմնորոշիչ և ամփոփիչ կոնֆերանսներ, ժողովներ,
5. Կազմակերպվել են հանդիպումներ փորձուսուցման ղեկավար-մեթոդիստների հետ,
6. Կազմակերպվել է փորձուսուցման վայրերից նշանակված ղեկավարների վարձատրության գործընթացը,
7. Վերահսկվել է փորձուսուցման ողջ գործընթացը,
8. Կազմվել են փորձուսուցման հետ կապված բոլոր հաշվետվությունները:

### **ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ** *Բաժնի պետ՝ Առուշանյան Եղիշե Զավենի*

2020-2021 ուսումնական տարում հրատարակչության գործունեությունը կազմակերպվել է նախապես կազմված ու հաստատված աշխատանքային պլանի համաձայն, ինչը նպատակ է հետապնդում ապահովելու Արցախի պետական համալսարանի բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր դասամատյանների, արձանագրությունների մատյանների, աշխատանքային փաստաթղթերի, բլանկների, քննությունների անցկացման համար բոլոր թեստերի ու տոմսերի, պատվոգրերի, շնորհակալագրերի, հատուկ նմուշի դիպլոմների միջուկների ձևավորումը, տպագրությունը և պատճենահանումը:

Հրատարակչությունը շարունակում է կատարել մագիստրոսական, ավարտական, կուրսային աշխատանքների ձևավորման և տպագրության, անհրաժեշտության դեպքում գունավոր տպագրության և լամինապատման աշխատանքներ: Հրատարակչությունում համապատասխան պարբերականությամբ տպագրվում են համալսարանական՝ «Արցախի համալսարան», ուսանողական՝ «Քո ժամանակը» ամսաթերթերը, «Արցախի համալսարանի գիտական տեղեկագիր (Հասարակական գիտություններ)», «Արցախի համալսարանի գիտական տեղեկագիր (Բնական գիտություններ)» գիտական հոդվածների պարբերականների I և II պրակները, գիտաժողովների նյութեր, Գիտական խորհրդի կողմից հաստատված մենագրությունները, գիտամեթոդական և ուսումնամեթոդական ձեռնարկները:

Հրատարակչությունը շարունակել է նաև ԱրՊՀ 50-ամյակին նվիրված «Արցախի ժողովրդագրությունը» և «Этнография Нагорного Карабаха» մատենաշարերի նյութերի համակարգչային հավաքման ու տեխնիկական խմբագրման աշխատանքները:

Հրատարակչության բաժնի կողմից տպագրվել են ԱրՊՀ հավատարմագրման համար անհրաժեշտ նյութերը, ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ուսումնական պլանները, այլ նյութեր:

Հրատարակչությունը կատարել է նաև 1012000 դրամի վճարովի ծառայություն:

## ԿԱՂԵՐԻ ԲԱԺԻՆ

### Բաժնի պետ՝ Միքայելյան Կարինե Լևոնի

2020-2021 ուսումնական տարում բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ձևակերպվել է 248 հրաման՝ աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, աշխատանքային արձակուրդների, չվճարվող արձակուրդների, խրախուսման, պարգևատրման, տույժի, փորձուսուցման և այլնի մասին: Հրամանների քաղվածքները բաժանվել են համապատասխան ֆակուլտետների դեկանատներին, ամբիոններին և մյուս ստորաբաժանումներին, դրանց բովանդակությանը ծանոթացել են համապատասխան անձինք:

2. Կնքվել է 350 -ից ավելի աշխատանքային պայմանագիր:

3. Գրանցվել է 580-ից ավելի դիմում և ներկայացում:

4. Լրացվել է 132 տեղեկանք, 105 անաշխատունակության թերթիկ, 14 գործուղման թերթիկ:

5. Աշխատանքի է ընդունվել 22 հիմնական և 107 ժամավճարային հիմունքներով աշխատող:

6. Իրենց դիմումների համաձայն աշխատանքից ազատվել են 34, պայմանագրի ժամկետը լրանալու հետ կապված՝ 7, թոշակային տարիքի հետ կապված՝ 5, մահվան հետ կապված՝ 3 անձինք:

7. Նոր հիմնական աշխատանքի ընդունվողներից պահանջվել են աշխատանքային գրքույկներ, կատարվել գրառումներ: Գրառումներ են կատարվել նաև տարակարգերի փոփոխման, տեղափոխությունների, աշխատանքից ազատվողների աշխատանքային գրքույկներում:

8. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն են ներկայացվել տեղեկություններ համալսարանի աշխատակազմի մասին:

9. Կազմվել է աշխատողների աշխատանքային արձակուրդների ժամանակացույցը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

### Բաժնի պետ՝ Սվետլանա Վլադիմիրի Հարությունյան

2020-2021 ուսումնական տարում ԱրՊՀ ընդհանուր բաժնի փաստաթղթերի ընդունման և հաշվառման ցուցանիշները ներկայացվում են ստորև:

Ելից գրությունների մատյանում գրանցվել է 189 գրություն, որից փոստային առաքանու առաքման միջոցով հանրապետությունից դուրս առաքվել է 99 (փոստային առաքանու միջոցով առաքված 99 գրությունից 89-ը ուղարկվել է նաև էլեկտրոնային տարբերակով), ԱրՊՀ ցրիչի միջոցով՝ 90 գրություն:

Մտից գրությունների մատյանում գրանցվել է 211, ներկայացումների, զեկուցագրերի և միջնորդագրերի մատյանում՝ 586 գրություն, դիմումների գրանցման մատյանում՝ 2300 դիմում և ներկայացվել մակագրության ու հանձնվել համապատասխան բաժիններ (դեկաններին, ամբիոնների վարիչներին ուղղված մակագրությամբ փաստաթղթերը 2020թ. դեկտեմբեր ամսից տրամադրվել են ԱրՊՀ-ում գործող ներքին ցանցով):

Ըստ արխիվում պահպանված տվյալների՝ տրամադրվել է շրջանավարտների ուսումնառության տարիների 249 և աշխատած տարիների վերաբերյալ 10 տեղեկանք:

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

### Կենտրոնի ավագ մասնագետ՝ Վահագն Արկադիի Թովմասյան

2020-2021 ուսումնական տարում Հայագիտական կենտրոնը կատարել է հետևյալ աշխատանքները.

1. 2021թ. ապրիլի 28-ին ԱրՊՀ հայագիտական կենտրոնի աջակցությամբ ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը կազմակերպել է Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշ-ցերեկույթ՝ «Պատմության սև էջերը» թեմայով:

2. Առկա հայագիտական համացանցային նախագծերի հետ համագործակցության ապահովման շրջանակներում՝ «Հայագգ» էլեկտրոնային հանրագիտարանում տեղադրվել են կենսագրական տվյալներ:

3. Կենտրոնում շարունակական բնույթ է կրում Արցախյան հարցի կարգավորմանը վերաբերող նյութերի հավաքագրումը:

Կենտրոնում գործում են ընթերցասրահ, հայագիտական ուղղվածությամբ էլեկտրոնային գրադարան, որոնք համալրվում են նոր գրականությամբ և պարբերականներով:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

### ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

#### *Բաժնի պետ՝ Էրիկ Հենրիկի Կազրամանյան*

2020-2021 ուսումնական տարում տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժինը իրականացրել է համալսարանի տեղեկատվական համակարգի ենթահամակարգերի և օբյեկտների սպասարկման աշխատանքներ:

Հայտնաբերվել են վթարված համակարգչային տեխնիկայի խափանման պատճառները ըստ անհրաժեշտության վերանորոգվել, փոփոխվել, արդիականացվել, օպտիմալացվել և հզորացվել են համակարգչային տեխնիկական և սարքավորումները: Կատարվել են համակարգիչների համակարգային բլոկների մաքրման, պրոցեսորների ջերմային մածուկի փոխարինման, տեխնիկապես վնասված, այրված կամ այլ պատճառներով շարքից հանված դետալների, մեխանիզմների և ինտեգրալային սխեմաների ախտորոշման, վերանորոգման և փոխարինման աշխատանքներ, ինչպես նաև համակարգիչների հիմնական և լրացուցիչ սարքերի աշխատունակության պահպանման սպասարկման աշխատանքներ:

Համալսարանում ապահովվել է լոկալ և գլոբալ ցանցերի, ցանցային սարքերի, սերվերների և տվյալների բազաների անխափան աշխատանքը, որն ընձեռել է համացանցից օգտվելու, նյութերի տպագրման, դասախոսների կողմից տրամադրված ուսումնական և այլ նյութերից օգտվելու և համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության, կառավարման տեղեկատվական այլ համակարգերի աշխատանքները իրականացնելու հնարավորություն:

Կատարվել են համալսարանի ծրագրային բազայի թարմացում, համակարգիչների օպերացիոն համակարգերի, ծրագրերի և ցանցային ծրագրային միջոցների թերությունների վերացման, սխալների շտկման, թարմացման և արդիականացման աշխատանքներ: Ուսումնասիրվել և ձեռնարկվել են քայլեր համակարգչային ցանցի, սարքերի և սարքավորումների, ու համակարգիչների տեխնիկական և ծրագրային անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համակարգչային կենտրոնների պատասխանատուների կողմից կատարվել են լաբորատոր աշխատանքների թարմացումներ, անհրաժեշտության դեպքում լաբորատոր աշխատանքների ժամանակ օգնություն է ցուցաբերվել ուսանողներին: Պարապմունքների ժամանակ ի հայտ եկած ծրագրային և տեխնիկական անսարքությունները գրանցվել և ժամանակին վերացվել են: Կուրսային, ավարտական և ինքնուրույն աշխատանքների կատարման համար ուսանողներին տրամադրվել է լրացուցիչ պարապմունքների գրաֆիկ:

Համալսարանի 4 համակարգչային լաբորատորիաներն, ապահովված էին 100 համակարգիչներով, 3 տպիչ սարքով, 4 պրոյեկտորով և 1 սենսորային գրատախտակով: Համակարգչային թեստավորման կենտրոնը ապահովված էր 86 համակարգչով և 1 տպիչ սարքով: Ամբիոններին պատկանող համակարգչային լսարաններն ապահովվել են համալսարանի 5 ֆակուլտետների բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների համապատասխան ուսումնական գործընթացները: Լսարաններն ըստ անհրաժեշտության ապահովվում են ուսումնական գործընթացին անհրաժեշտ հավելյալ սարքավորումներով (պրոյեկտոր, դինամիկ, տեսախցիկ):

Համալսարանում կիրառվել է Google Workspace համակարգը: Բայց քանի որ համակարգիչների տեխնիկական և ծրագրային պարամետրերը չէին համապատասխանում Google Workspace համակարգի աշխատանքն իրականացնելու համար, իրականացվեցին համակարգիչների

տեխնիկական պարամետրերի և օպերացիոն համակարգերի փոփոխություններ: Փոփոխությունները իրականացվեցին հիմնականում ամբիոններում, քանի որ առցանց դասախոսությունները հիմնականում իրականացվում են ամբիոններից: Տեխնիկական փոփոխությունները իրականացվեցին հիմնականում համակարգիչներում օպերատիվ հիշող սարքերի փոփոխությամբ կամ ավելացմամբ, ինչպես նաև տեսախցիկ-բարձրախոս սարքերի և դինամիկների ժամանակավոր կամ հիմնական տրամադրմամբ: Օպերացիոն համակարգերի փոփոխությունները իրականացվեցին այն պատճառով, որ Google Workspace համակարգը աշխատում է համեմատաբար նոր տարբերակի բրաուզերներում, իսկ օգտագործվող բրաուզերները հին էին և ավտոմատ չէին թարմացվում: Հնարավոր չէր նաև թարմացնել բրաուզերները նոր տարբերակի ներբեռնման և տեղադրման կամ վերատեղադրման միջոցով, քանի որ օգտագործվող Windows XP օպերացիոն համակարգի աջակցությունն ավարտվել էր 14.04.2014, և դրանից հետո էլ է բրաուզերների նոր տարբերակների Windows XP օպերացիոն համակարգի աջակցությունից աստիճանաբար հրաժարվել: Այդ իսկ պատճառով անցում կատարվեց Windows 7 օպերացիոն համակարգին, որը դեռ հնարավորություն է տալիս օգտվել բրաուզերների նոր տարբերակից:

Հաշվետու տարում համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգի ներդրմամբ՝ իրականացվել են ամրագրված գործառնություններ, կատարվել են խորհրդատվություններ:

## ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

### *Բաժնի պես՝ Հասմիկ Նիկոլայի Հարությունյան*

2020-2021 ուսումնական տարվա ընթացքում գրադարանային ֆոնդերը համալրվել են նվիրատվությամբ և համալսարանի կողմից գնված գրքերով: 2020-2021 ուսումնական տարվա համալրված գրականությունը՝ 1581 (հազար հինգ հարյուր ութսունմեկ) միավոր, 6.514.725 (վեց միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր քսանհինգ) դրամ արժողությամբ, ձեռք է բերվել կանխիկ՝ համալսարանի դրամական միջոցներով, որից՝ զուտ գրքերը՝ 1576 (հազար հինգ հարյուր յոթանասունվեց) միավոր: Որպես նվիրատվություն՝ մուտքագրել ենք 693 (վեց հարյուր ինսուններեք) միավոր գրականություն՝ 486100 (չորս հարյուր ութսունվեց հազար հարյուր) դրամ արժողությամբ, որից՝ 14 (տասնչորս) գրքույկ և 162 (հարյուր վաթսուն երկու) ամսագիր: Ընդհանուր 2274 (երկու հազար երկու հարյուր յոթանասունչորս) միավոր մուտքագրված գրականության ընդհանուր արժողությունը կազմում է 7.000.758 (յոթ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար) դրամ, 6734 (վեց հազար յոթ հարյուր երեսունչորս) լուսն: Գրադարան մուտքագրված նոր ստացած գրականության ցանկը տեղադրվում է համալսարանի էլեկտրոնային ներքին ցանցում:

Ուսումնական տարվա վերջին պատերազմի հետևանքով գիրք կորցրած ընթերցողների, մահացած ու զոհված ընթերցողների ընթերցողական գրքույկներից դուրս են գրվել 272 (երկու հարյուր յոթանասուներկու) անուն գիրք, որից 216-ը հայերեն, 39-ը ռուսերեն, 17-ը անգլերեն՝ 430.102 (չորս հարյուր երեսուն հազար հարյուր երկու) դրամ ընդհանուր արժողությամբ:

Համալրված գրականության հետ 2020-2021 ուսումնական տարվա վերջին գրքային ունեցվածքը կազմում էր 88.407 (ութսունութ հազար չորս հարյուր յոթ) միավոր, զուտ գրքերը՝ 78.493 (յոթանասունութ հազար չորս հարյուր ինսուններեք) միավոր:

2020-2021 ուստարում նվիրատվություններ են արվել անհատ հեղինակներից, ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից, Արթիկի փոխադաքապետի կողմից, ԱՀ դատարանի կողմից, Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտի կողմից, «Ջենեսիս Արմենիա» հիմնադրամի կողմից: Համալրված գրականության մի մասն էլ կազմում է բաժանորդագրությունը. նշված ժամանակահատվածում գրադարանը բաժանորդագրվել է 7 (յոթ) անուն թերթի, որոնք գրադարան են մուտքագրվում ամսավճարով: Բացի նվիրատվություններից գրադարանային ֆոնդը համալրվել է զուտ պետհամալսարանի դրամական միջոցներով:

**Ընթերցողների կազմը.** ընթերցողների ընդհանուր թիվը հաշվետու ուստարում կազմում էր 1716, որից պրոֆեսորադասախոսական կազմը՝ 210, աշխատողները՝ 167, ուսանողները՝ 1212, մագիստրանտները՝ 94, ասպիրանտները՝ 2, այլ ընթերցողները՝

31:

Ուսումնական տարվա ընթացքում գրանցել ենք 334 (երեք հարյուր երեսունչորս) նոր ընթերցող, էլեկտրոնային ներքին ցանցում ենք տեղադրել մասնագիտական գրականության ցանկը՝ վերջին 5 տարվա կտրվածքով:

Ընթերցողների հետ աշխատանքներն ավելի ծավալուն են դառնում ուսումնական տարվա վերջին՝ կապված ավարտական քննությունների հետ, այդ թվում նաև տեղեկանքների տրման և պարտքատերերի հետ կապված աշխատանքները:

Բակալավրի IV կուրսերի ուսանողներից պարտք է ունեցել 128-ը, առկա ուսուցման մագիստրանտներից՝ 41-ը: Նախօրոք բոլոր դեկանատներում կուրսից կուրս փոխադրվողներին և ավարտական կուրսերին հայտարարվել էր վերադարձնել զրքերը: Հաշվետու ուսումնական տարում ավարտական կուրսերից պարտքատեր չի մնացել:

Գրադարանի ընթերցասրահում ընթերցողներին են տրամադրվել գրադարանում եղած զրքերի մեկական օրինակները և բաժանորդագրությունից ստացած թերթերը: Մշտական գործում են նոր ստացած գրականության ցուցադրական, «Մեր օրացույցը», «Օրվա պարբերականներ», «Տոն օրերին նվիրված», ինչպես նաև «Նշանավոր հոբելյաններ» ցուցատախտակները:

2020-21 ուստարվա ընթացքում կազմակերպել ենք միջոցառումներ՝ նվիրված Հովհաննես Թումանյանի և Հովհաննես Շիրազի ծննդյան օրերին:

Պատրաստ և էլեկտրոնային ներքին ցանցում տեղադրված են 1998թ. մինչև 2021թ. ԱրՊՀ-ում հրատարակված գիտական տեղեկագրերի հոդվածների մատենագիտական ցանկերը հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակով: Ընթերցողներն օգտվում են «Նրա մասին» քարտարանից, «Ազգային ազատագրական շարժումը Արցախում», «Հայոց ցեղասպանությունը» և «Գիտական հոդվածներ»-ի մատենագիտական ցանկերից:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺԻՆ

### *Բաժնի պետ՝ Գալոյան Վահե Վազգենի*

ԱրՊՀ ՈՒՀՏԱ և կարիերայի բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1.Նախորդ ուսումնական տարիներին սկիզբ դրված ԱրՊՀ շրջանավարտների ուսումնասիրման գործընթացը շարունակություն է ստացել նաև հաշվետու տարում: Բաժնի կողմից մշակված ծրագրով մուտքագրվել են շրջանավարտների կոնտակտային տվյալները (շրջանավարտների գրանցման թերթիկի միջոցով), այն լրացնելուց հետո ըստ ֆակուլտետների մուտքագրվել է շրջանավարտների բազա: Բազայի տվյալներն օգտագործվել են աշխատանքային հայտերի, թափուր աշխատատեղերի առկայության դեպքում, ինչպես նաև հինգ տարվա շրջանավարտների տվյալների բազան օգտագործվել է հավատարմագրման գործընթացին անհրաժեշտ ինքնավերլուծության հաշվետվության համար:

2.Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու նպատակով բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա.Սեպտեմբերի 24-ին ԱրՊՀ-ում կայացել է համագործակցության հուշագրի ստորագրում «Միներջի Միսթենա» և «Կապիտալ Սոֆթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ, որոնք կնպաստեն առաջին հերթին բուհի շրջանավարտներին աշխատանքով ապահովմանը:

բ.Ապրիլի 5-11-ը կայացել է «Քաթըլիսթ» հիմնադրամի կողմից իրականացվել է «Startup Boost Week Vol7» միջոցառումը: Արցախի պետական համալսարանի մի խումբ ուսանողներ «GG» ընկերության բացառիկ աջակցության շնորհիվ առաջին անգամ մասնակցել են ծրագրին: Միջոցառումը հարթակ է տրամադրել Start-up ստեղծելու և զարգացնելու համար՝ ուսանողներին տալով իրական փորձառություն և մրցակցային առավելություններ: ԱրՊՀ ուսանողները միջոցառման մասնակից են դարձել առցանց եղանակով:



գ.Բաժինը ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացնում է թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունների միջոցով:  
Բաժնի կազմակերպած միջոցառումներն են.

- արհիության դաս՝ նվիրված Արցախի անկախության օրվան,
- առաջին կուրսեցիների դիմավորման և երդման արարողությունների կազմակերպում, տեսահոլովակների նկարահանում,
- առաջին կուրսեցիների հետ իրազեկման աշխատանքների կազմակերպում,
- «Ճանաչիր Արցախը» ծրագրի շրջանակներում պատմաճանաչողական արշավների կազմակերպում Արցախի մշակութային տարբեր վայրեր,
- կազմակերպվել է այցելություն Գանձասարի վանական համալիր և մոմավառություն հանուն Արցախի վերածննդի,
- 44-օրյա պատերազմի հետևանքով զոհված, անհետ կորած ուսանողների տվյալների հավաքագրում, տեղահանված ուսանողների ընտանիքների հետ կամավորական աշխատանքների կազմակերպում,
- «Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության» միջազգային օրվան ընդառաջ Արցախի տարբեր համայնքներում հուշարձանների և տեսարժան վայրերի բարեկարգման և սանմաքրման աշխատանքների կազմակերպում,
- ռազմամշակութային տարբեր մրցույթների կազմակերպում,
- «ԱրՊՀ Պատարա-2021» ամառային դպրոց-ճամբարի կազմակերպում:

Այսպիսով, 2020-2021 ուսումնական տարում, չնայած Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմին և երկրում տիրող ռազմական իրավիճակին, Բաժինը իրականացրել է մի շարք խնդիրների լուծման համալիր գործողություններ՝ կազմակերպելով կամավորական աշխատանքներ, հանդիպումներ ուսանողների և գործատուների հետ, մի շարք միջոցառումներ, պատմաճանաչողական արշավներ՝ ամրապնդելով համալսարանի կապը պետական կառույցների, գործատուների և այլ համակարգերի հետ, շարունակելով նպաստել ուսանողների ակտիվ մասնակցությունը հասարակական աշխատանքներին և երկրի բարգավաճմանը:

## ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

### *Բաժնի պետ՝ Զարինե Գարեգինի Սառաջյան*

Հաշվետու տարին լի էր մարտահրավերներով ու դժվարություններով, որոնք պայմանավորված էին համավարակով ու պատերազմով: Այնուամենայնիվ, թե՛ առցանց և թե՛ ավանդական եղանակներով Բաժինն աշխատանքներ է իրականացրել՝ ապահովելով արդյունավետություն և կատարելով նախանշած խնդիրները: Աշխատանքներ են իրականացվել հիմնականում հետևյալ ուղղություններով:

**Հանրային կապեր:** Այս ուղղությամբ Բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք ուղղված են եղել ԱրՊՀ գործունեության և նրա վարկանիշի բարձրացմանը, տեղեկատվական և քարոզչական բնույթի միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, նպաստել հանրային նշանակության տարաբնույթ միջոցառումների (այդ թվում՝ տոն օրերին նվիրված միջոցառումների, համաժողովների, հավաքների, երթերի) կազմակերպմանը, հանրապետության սահմաններում և դրանից դուրս գործող ուսումնակրթական հաստատությունների հետ համագործակցային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, համատեղ միջոցառումների կազմակերպմանը, հանրապետության երիտասարդական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի իրականացմանը: Բաժինը համագործակցում է ԱՀ-ում գործող տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և անհատ լրագրողների, ինչպես նաև տարբեր բուհերի ուսանողների հետ տարվող աշխատանքների, այլ կառույցների հանրային կապերի և լրատվության բաժինների հետ:

**Լրատվություն:** Այս ուղղությամբ Բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք նպաստել են ԱրՊՀ համացանցային ռեսուրսների ակտիվացմանը, պաշտոնական կայքի զարգացմանը, սոցիալական-տեղեկատվական ցանցերում ներկայացվածությանը, հետադարձ կապի ապահովմանը, «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի, «Քո ժամանակը» ուսանողական



ամսաթերթի, ԱրՊՀ-ի մասին պատմող տեսանյութերի, լուսանկարների և տպագրական նյութերի ստեղծմանն ու տարածմանը: Իրականացվել է տպագիր և էլեկտրոնային մամուլում ԱրՊՀ անդրադարձների դիտարկում, վերլուծություն և տեղայնացում: Իրականացվել է «Արցախի համալսարան» և «Քո ժամանակը» թերթերի տարածումը ԱՀ, ՀՀ համապատասխան կառույցներում, համալսարանի ֆակուլտետներում և ստորաբաժանումներում: Պարբերաբար կատարվել են անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ:

## **ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ** **Կենտրոնի վարիչ՝ Գասպարյան Անահիտ Էդուարդի**

2020-2021 ուսումնական տարում ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

### **1. Տեսական և պրակտիկ դասընթացներ, թրեյնինգներ**

Դեկտեմբերի 18-ին տեղի է ունեցել հանդիպում ՌԴ ԱԻՆ հոգեբանների հետ:

Դեկտեմբերի 21-ին «Ապրելու արվեստ» հիմնադրամը նախաձեռնել է հոգեբանական աջակցությանը միտված «Զվարթնոց» եռօրյա ծրագիրը: Ծրագրի շրջանակներում հոգեբան Ապրես Զոհրաբյանը հանդիպում է ունեցել ուսանողության հետ և ներկաներին հրավիրել եռօրյա դասընթացին մասնակցելու:

Դեկտեմբերի 28-ին ՌԴ ԱԻՆ հոգեբաններ Ն.Դ. Բիդյուկի, Լ.Վ. Վոլոշինայի կողմից անց է կացվել պրակտիկ դասընթաց «Առաջին հոգեբանական օգնությունը արտակարգ իրավիճակներում» թեմայով:

Հունվարի 5-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Լ.Վ. Վոլոշինայի կողմից անց է կացվել թրեյնինգ «Ունկնդրելու տեխնիկան որպես հոգեբանի կարողություն» թեմայով:

Հունվարի 27-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ն.Դ. Բիդյուկի կողմից անց է կացվել պրակտիկ դասընթաց «Հոգեբանական խորհրդատվության հիմունքներ» թեմայով:

Հունվարի 28-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ն.Դ. Բիդյուկի կողմից դասախոսական կազմի համար անց է կացվել գործնական պարապմունք «Մթերես» թեմայով:

Փետրվարի 12-ին Ս.Վ. Ցիգանկովի կողմից անց է կացվել թրեյնինգ «Մթերեսի հաղթահարման ուղիները» թեմայով:

Փետրվարի 19-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ս.Վ. Ցիգանկովի կողմից անց է կացվել թրեյնինգ «Ինչպես հաղթահարել վիշտը կորստից հետո առաջին ամիսներին» թեմայով:

Մարտի 1-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ս.Վ. Ցիգանկովի կողմից անց է կացվել թրեյնինգ «Արտ-թերապիայի հնարներով հոգեբանական աջակցություն՝ ուղղված կորստի ապրման հաղթահարմանը» թեմայով:

Մարտի 3-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ն.Դ. Բիդյուկի կողմից անց է կացվել պրակտիկ դասընթաց «Տուժածներին հրատապ հոգեբանական օգնություն արտակարգ իրավիճակներում» թեմայով:

Մարտի 5-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ս.Վ. Ցիգանկովի կողմից անց է կացվել թրեյնինգ «Ինքնակարգավորման մեթոդներ և եղանակներ» թեմայով:

Մարտի 11-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ն.Դ. Բիդյուկի կողմից անց է կացվել պրակտիկ դասընթաց «Կոգնիտիվ (իմացական) վարքաբանական հոգեթերապիայի տեխնիկաներ» թեմայով:

Մարտի 16-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ն.Դ. Բիդյուկի կողմից անց է կացվել պրակտիկ պարապմունք «Բարնիի «Ընկնող նետը» մեթոդիկայի կիրառումը» թեմայով:

Մարտի 19-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ս.Վ. Ցիգանկովի կողմից «Հոգեբանություն» մասնագիտության ուսանողների համար անց է կացվել թրեյնինգ «Հոգեբանական օգնություն մարտական գործողություններին մասնակցած անձանց» թեմայով, իսկ «Իրավաբանություն» մասնագիտության ուսանողների համար՝ «Ազդեցության հոգեբանություն» թեմայով:

Մայիսի 21-ին ՌԴ ԱԻՆ հոգեբան Ս.Վ. Ցիգանկովի կողմից անց է կացվել թրեյնինգ «Ռեկապսացիայի տեխնիկաներ» թեմայով:

Հունիսի 16-ին «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության մենեջեր Աննա Կադգինայի կողմից անց է կացվել թրեյնինգ «Ինչպես հաղթահարել սթրեսը սթրեսային իրադրությունում» թեմայով:

## **2. Կենտրոնի զարգացման ուղղված միջոցառումներ**

Փետրվարի 15-ից 26-ը կենտրոնում կազմակերպվել է փորձուսուցում հեռակա ուսուցման համակարգի «Հոգեբանություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսի ուսանողների համար:

Ապրիլի 13-ին հոգեբանություն 2-րդ կուրսի ուսանողները կենտրոնի պրակտիկ հոգեբան Ա. Բաբայանի և մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Ա. Ավանեսյանի գլխավորությամբ, ԱրՊՀ-ում մեկնարկած «Հոգեբանի հետ» ծրագրի շրջանակում ներկայացել են ֆիզմաթ դպրոց, հանդիպել ուսուցիչների և աշակերտների հետ:

Ապրիլի 14-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի մասնագետներն ու «Հոգեբանություն» կրթական ծրագրով սովորող մի խումբ ուսանողներ, ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի գլխավորությամբ «Հոգեբանի հետ» ծրագրի շրջանակում այցելել են Մարտունու շրջանի Գիշի գյուղի և Ճարտարի քաղաքի միջնակարգ դպրոցներ:

Ապրիլի 20-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի մասնագետներն ու «Հոգեբանություն» կրթական ծրագրով սովորող մի խումբ ուսանողներ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի գլխավորությամբ «Հոգեբանի հետ» ծրագրի շրջանակում այցելել են Ստեփանակերտի թ. 11 դպրոց:

Ապրիլի 22-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի մասնագետներն ու «Հոգեբանություն» կրթական ծրագրով սովորող մի խումբ ուսանողներ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի գլխավորությամբ ԱրՊՀ-ում մեկնարկած «Հոգեբանի հետ» ծրագրի շրջանակում այցելել են ք. Ասկերանի և Նորագյուղի միջն դպրոցներ:

Ապրիլի 27-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի մասնագետներն ու «Հոգեբանություն» կրթական ծրագրով սովորող մի խումբ ուսանողներ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի գլխավորությամբ «Հոգեբանի հետ» ծրագրի շրջանակում այցելել են Ստեփանակերտում տեղակայված Շուշիի Խ. Աբովյանի անվան (Ստեփանակերտի հ. 2) և Հաղորթի (Ստեփանակերտի հ. 3) դպրոցներ:

Ապրիլի 29-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի մասնագետներն ու «Հոգեբանություն» կրթական ծրագրով սովորող մի խումբ ուսանողներ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի գլխավորությամբ «Հոգեբանի հետ» ծրագրի շրջանակում այցելել են Մարտունի քաղաքի Ն. Ստեփանյանի անվան թ. 1 և Բերդաշենի միջն դպրոցներ:

Մայիսի 4-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի մասնագետներն ու «Հոգեբանություն» կրթական ծրագրով սովորող մի խումբ ուսանողներ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի գլխավորությամբ «Հոգեբանի հետ» ծրագրի շրջանակում այցելել են Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան և Հոռաթաղի միջնակարգ դպրոցներ:

Հունիսի 25-ին կազմակերպվել է «Հետպատերազմյան սինդրոմներ» խորագրով հոգեբանական աշխատաժողով, որտեղ քննարկվել են մասնագիտական համայնքի անելիքները՝ Արցախում առկա իրավիճակի համատեքստում: Ելույթ ունեցողները կարևորել են աշխատաժողովի յուրահատուկ նշանակությունը: ԵՊՀ և ՀՊՄՀ կողմից առաջարկվել են աջակցության կոնկրետ ծրագրեր:

Կենտրոնում հետևողական աշխատանքներ են իրականացվել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական աշխատանքների (դասընթացային-գիտական, ավարտական, մագիստրոսական թեզ) կատարմանը նպաստելու ուղղությամբ: Ուսանողները օգտվել են կենտրոնում առկա անհրաժեշտ մասնագիտական գրականությունից:

Կենտրոնը ամենամսյա աշխատանքներ է իրականացրել առաջին կուրսեցիների հետ, որի նպատակը ուսանողներին հոգեբանական օգնություն և աջակցություն ցուցաբերելն ու ուսանողական խմբերում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումն է:

Հոգեբանական կենտրոնի և ավ. դասախոս Ա. Ավանեսյանի նախաձեռնությամբ և «Հոգեբանություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողների մասնակցությամբ մեկնարկել է «Հոգեբանական ակնարկներ» տեսանախագիծը, որտեղ լուսաբանվում են մի շարք արդիական հոգեբանական թեմաներ:

### 3. Համագործակցության զարգացում

Մարտի 6-ին «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ՝ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում, «Հոգեբանություն-1» կուրսի ուսանողները կամավոր հիմունքներով անց են կացրել հոգեբանական խմբային աշխատանքներ ք. Ճարտարի միջնակարգ դպրոցի տարրական դասարանների աշակերտների համար:

Մարտի 20-ին «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ՝ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում, «Հոգեբանություն-1» կուրսի ուսանողները կամավոր հիմունքներով անց են կացրել հոգեբանական խմբային աշխատանքներ ք.Ասկերանի Է. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի բարձր դասարանների աշակերտների համար:

Ապրիլի 28-ին հոգեբանական կենտրոնի աշխատակիցները մասնակցել են «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության և Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված «Կյանքը պատերազմից հետո» խորագրով կոնֆերանսին:

Մարտի 31-ին տեղի է ունեցել հանդիպում ք. Երևանի «Լոգոս» հոգեբանական կենտրոնի հիմնադիր տնօրեն Սյուզի Թումասյանի հետ: Նա ծանոթացրեց տրանսպերտնալ խորհրդատվության և հիպնոթերապիայի մեթոդներին և տեխնիկաներին, պատերազմական իրադրության հետևանքով հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ ունեցող ու վշտի մեջ գտնվող անձանց հետ հոգեբանական աշխատանքի առանձնահատկություններին, հոգեբանական խորհրդատվության ճիշտ կազմակերպմանը տրավմաների դեպքում:

Ապրիլի 8-ին կայացել է հանդիպում հ.գ.թ., դոցենտ Կարինե Նալչաջյանի և հ.գ.թ., ռազմական հոգեբան Դավիթ Ջամալյանի հետ:

Հանդիպման ընթացքում բանախոսները ներկայացրել են հոգեբանության բազմա-ճյուղ կառուցվածքը և անհրաժեշտությունը տարբեր բնագավառներում:

Մայիսի 25-ին կազմակերպվել է առցանց հանդիպում Հայաստանի ամերիկյան համալսարանի հոգեբանների հետ, որին մասնակցել են դասախոսներ, հոգեբանական կենտրոնի աշխատակիցներ, ուսանողներ և մագիստրանտներ:

Հունիսի 3-ին «Էմպաթիա» հոգեբանական կենտրոնում տեղի է ունեցել հանդիպում «ԻՆԹԸԱ» հոգեբանական կենտրոնի մասնագետ Անի Ազիզյանի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողները՝ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի հոգեբան Ա. Բաբայանի գլխավորությամբ:

Հունիսի 8-ին ՀԱՀ-ԱրՊՀ համագործակցության շրջանակում կայացել է հերթական առցանց դասախոսությունը Հայաստանի ամերիկյան համալսարանի հոգեբանների հետ, որին մասնակցել են դասախոսներ, հոգեբանական կենտրոնի աշխատակիցներ, «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողներ, մագիստրանտներ: Դասախոսությունները վարել են հոգեբաններ Ելենա Բարտենևան, Ելենա Մարդարյանը, Ռուբ Բյուրփեյանը: Նրանք հանդես են եկել «Մպառման սինդրոմ», «Ինքնազոհություն», «Մուլտիպլիկան և անհատական թերապիան որպես հոգեբանի պրակտիկ գործունեության անհրաժեշտ պայման» թեմաներով:

Հունիսի 10-ին Շուշիի Կերպարվեստի թանգարանի հետ համատեղ կազմակերպվել է դասախոսություն-քննարկում՝ «Արվեստի ստեղծագործությունների ստեղծման և ընկալման հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով: Միջոցառմանը մասնակցել են դասախոսներ, ուսանողներ ու մագիստրանտներ, աշխատակիցներ, արվեստագետներ:

Հունիսի 15-ին ՀԱՀ-ԱրՊՀ համագործակցության շրջանակում կայացել է հերթական 3-րդ առցանց դասախոսությունը: Նրանք հանդես են եկել «Դեպրեսիա», «Կորստի և վշտի հաղթահարում» թեմաներով:

#### 4. Միջոցառումներ՝ նվիրված նշանավոր մարդկանց, տոն և հիշարժան օրերին

Մարտի 24-ին կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ նվիրված դեպրեսիայի հաղթահարման միջազգային օրվան: Միջոցառման նպատակն էր մարդկանց ուշադրությունը հրավիրել հոգեկան առողջության խնդիրների վրա:

Ապրիլի 30-ին մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հետ համատեղ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Ցեղասպանության թեման կրթության ոլորտի համատեքստում» թեմայով:

**5. Անհատական և խմբային խորհրդատվություններ, շտկողական և թերապևտիկ աշխատանքներ**

Անհատական խորհրդատվություն ստանալու նպատակով կենտրոն են դիմել 18 հոգի՝ հետևյալ խնդիրներով.

- վախ,
- ագրեսիվություն,
- տագնապայնություն,
- ներանձնային կոնֆլիկտներ, սթրեսներ, դեպրեսիա և այլն:

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Նախագահ՝ Ասրյան Արման Լյուդվիգի**

ԱրՊՀ ուսանողական խորհուրդը (ՈւԽ) գործունեությունն իրականացնում է իր կանոնադրությանը համապատասխան՝ ակտիվորեն համագործակցելով ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտորի, ՈւՀՏԱ և Կ Բաժնի, ԱրՊՀ այլ ստորաբաժանումների հետ:

Ուսանողական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա հաշվետվությունը կազմված է ֆակուլտետների ուսանողական խորհուրդների /ՖՈւԽ/ հաշվետվությունների հիման վրա: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետներում զգալի աշխատանքներ են կատարվել ուսանողների ակտիվ ստեղծագործական կյանքը բովանդակալից դարձնելու և ուսումնագիտական գործունեության ուղղությամբ, կազմակերպվել են ուսումնական, մարզամշակութային և ժամանցային միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են հանդիպումներ ու քննարկումներ, որոնցից կարելի է առանձնացնել ԱրՊՀ ՈւԽ և ՖՈւԽ-երի ներկայացուցիչների հանդիպումները ԱրՊՀ ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվել և իրենց լուծումներն են ստացել ուսանողության կողմից բարձրագույն կարևոր հարցերը:

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ընդհանուր համալսարանական և ֆակուլտետային մակարդակներում կազմակերպվել ենք առաջին կուրսեցիների դիմավորման արարողությունը, որին հաջորդել են նրանց իրազեկման աշխատանքները:

Ցավոք, սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմը խաթարեց մեր հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ծրագրերը, իսկ հետագա ամիսների համար առաջ բերեց նոր օրակարգ:

Հոկտեմբերի առաջին օրերին համալսարանականները լայնորեն ընդգրկվեցին թիկունքում կազմակերպվող կամավորական աշխատանքներին:

ՈւԽ-ի անդամները իրենց անմիջական մասնակցությունը ունեցան նոյեմբերի 10-ից ուսումնական գործընթացի վերականգնման աշխատանքներին՝ մշտական կապի մեջ լինելով ուսանողության հետ՝ փորձելով վեր հանել առկա խնդիրները:

Դեկտեմբերի 15-ից նախաձեռնել և իրականացրել ենք տեղահանված մեր հայրենակիցներին օգնություն տրամադրելու ծրագիրը: Ուսանողության կողմից հավաքված հագուստը, սպասքը, հիգիենայի պարագաները և գրենական պիտույքները հասցնելով մեր հայրենակիցներին՝ փորձել ենք մեղմել նրանց հոգսերը:

ԱրՊՀ ուսանողական խորհուրդը նոր ուսումնական կիսամյակից վերսկսել է ակտիվ գործունեությունը՝ նպատակ ունենալով խթանելու համալսարանի ուսանողական ու գիտական կյանքի աշխուժացմանը:

Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսանողական խորհուրդը, համագործակցելով ՈւՀՏԱԿ Բաժնի հետ, կազմակերպել է «Ճանաչիր Արցախը» խորագրով արշավներ դեպի Արցախի Հանրապետության տարածքում գտնվող մի շարք մշակութային վայրեր, որին մասնակցում էին համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողները:

Նպաստելով *ուսանող-աշակերտ* կապի ամրապնդմանը՝ բոլոր ֆակուլտետները իրականացրել են դաս-սեմինարներ տարբեր դպրոցներում, մասնավորապես պատմության և իրավագիտության ֆակուլտետը՝ Հայոց ցեղասպանության, Կարսի և Մոսկվայի պայմանագրերի վերաբերյալ:

Համալսարանի բոլոր ֆակուլտետները ակտիվ մասնակցություն են ունեցել ԱրՊՀ ղեկավարության ու ՈւՄ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին՝ երթերին, մաքրման ու բարեկարգման, ինչպես նաև կամավորական աշխատանքներին:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ՈւՄ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել հավատագրման աշխատանքներին և լիովին իրականացրել է իր առջև դրված խնդիրները:

Ապրիլի 28-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և ՈՒՀՏԱԿ բաժնի աջակցությամբ ԱրՊՀ բոլոր ֆակուլտետների ուսանողների միջև կազմակերպվեց շախմատային մրցախաղ: Ուսանողները մեծ ոգևորությամբ ու հետաքրքրությամբ իրենց ուժերը փորձեցին մրցությունում:

ԱրՊՀ ղեկավարության, ՈւՀՏԱԿ բաժնի և ՈւՄ-ի նախաձեռնությամբ մայիսի 13-ին ՊԲ «Ասպարեզ» հրաձգարանում համալսարանի հինգ ֆակուլտետների միջև տեղի է ունեցել հրաձգության մրցույթ: Մրցույթի կազմակերպման նպատակն էր՝ մասնակիցների մոտ զարգացնել զենքի ճիշտ օգտագործման, արագ կողմնորոշվելու ունակությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում ՈւՄ-ն քննարկել ու լուծումներ է տվել ուսանողների կողմից վեր հանված բոլոր խնդիրներին:

ՈւՄ-ի մշտական հանձնաժողովները նույնպես աշխատանքներ են կատարել իրենց վստահված ուղղություններով:

Ուսանողական խորհուրդն ակտիվ համագործակցել է ԱՀ ԿԳՄՍ գիտության, մշակույթի, և սպորտի նախարարության, Արցախում գործող հասարակական կազմակերպությունների և տարբեր բուհերի ինքնավար կառույցների հետ: Հաշվետու ուսումնական տարում ավելացել է ակտիվ ուսանողների քանակը՝ պայմանավորված ՈւՄ-ի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումների բնույթով: Վերոնշյալ կազմակերպված միջոցառումներին մեծապես աջակցել ու օգնել է ՈւՀՏԱԿ բաժինը, ՈւՀՀՀՏԱԳ պրոռեկտորը և ԱրՊՀ ղեկավարությունը:

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

### *Նախագահ՝ Ղազարյան Արման Ռուսլանի*

Առաջնորդվելով 2020-2021թթ. ուսումնական տարվա աշխատանքների ծրագրով՝ ՈւԳԸ-ն ակտիվորեն աշխատանքներ է տարել մի շարք ուղղություններով:

1. Սեպտեմբեր ամսից պարբերաբար կայացել են ամենամյա ՈւԳԸ նիստեր՝ ՈւԳԸ և ՖՈւԳԸ աշխատանքային պլանները քննարկելու նպատակով:

2. Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով ՈւԳԸ գործունեությունը ժամանակավոր դադարեցվել է և մեկնարկել փետրվար ամսից:

3. Փետրվար ամսին կազմակերպվել են դաս-սեմինարներ՝ ուսանողներին ռեֆերատներ և կուրսային աշխատանքներ գրելու կարգին ծանոթացնելու նպատակով:

4. ՖՈւԳ կառույցները ձեռնամուխ են եղել ֆակուլտետներում ինտելեկտուալ խաղերի, կլոր սեղան-քննարկումների կազմակերպմանը՝ նշանակալի թեմատիկաներ ընտրելով:

5. Մարտ ամսին բուհ-դպրոց կապի շրջանակներում ՈւԳԸ-ն նախաձեռնել է հետաքրքրաշարժ վիկտորինաների կազմակերպում՝ փորձելով սեր առաջացնել դեպի պահանջված առարկաներ:

6. Ապրիլ ամսին Մեծ եղեռնի 106-րդ տարելիցի կապակցությամբ պատմական անդրադարձ կատարելով հայոց ողբերգական էջերին՝ բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են հուշ-ցերեկույթներ:

7. Մայիս ամսին Գորիսի պետական համալսարանի կազմակերպած գիտաժողովին ուսանողների մասնակցությունն ապահովելու համար ՈւԳԸ կառույցը կատարել է իրազեկման աշխատանքներ, ծանոթացրել հոդված գրելու կարգին:

8. ՈւԳԸ և ՈւԽ կառույցների միջև ապահովվել է համակողմանի, փոխշահավետ համագործակցություն:

9. Մայիս ամսին հրավիրվել է ՈւԳԸ նիստ՝ տարվա հաշվետվությունները ներկայացնելու, հաջորդ տարվա անելիքները քննարկելու և առկա թերությունները շտկելու նպատակով:

### **ԲՈՒԺԿԵՏ**

#### ***Վարիչ՝ Պետրոսյան Ռոմելա Զինավուրի***

2020-2021 ուսումնական տարում բուժկետ է հաճախել 1291 մարդ, որից 258 ուսանող, 1033 աշխատող: Հաճախորդների թիվը 2019-2020 ուսումնական տարվա համեմատ նվազել է 528-ով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

---

---

*Ծավալը 22,7 տպ. մամուլ: Տպարանակ 50:*

Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5  
հեռ.՝ (0749) 4-04-91, ֆաքս՝ (0479) 7-12-14

E-mail: [rector@asu.am](mailto:rector@asu.am)

ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),

կայք: [www.asu.am](http://www.asu.am)

Арцахский государственный университет

г.Степанакерт, ул. Мхитара Гюша 5,

тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14

Издательство АргУ, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),

сайт: [www.asu.am](http://www.asu.am)

Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert

Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14

ASU Publishing house, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),

website: [www.asu.am](http://www.asu.am)